

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/2

27 հուլիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 17.07.2012թ-ի նիստում քննության է առնվել <Մավա Իմպուլս> ՍՊԸ 10.07.2012թ. դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.06.2012թ. թիվ 1040144/1 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.03.2012թ. թիվ 1040144/1 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում 26.06.2012թ-ին կազմվել է թիվ 1040144/1 ակտը (այսուհետ նաև ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 31.064.965 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

<Մավա Իմպուլս> ՍՊԸ-ում ստուգումներն իրականացվել են ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Մալաթիայի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Առաքելյանի կողմից կայացված 29.11.2011թ. որոշման և 07.06.2012թ-ի թիվ 1521 գրության հիման վրա, որն ընդգրկել է 01.03.2008–01.03.2010թթ. ժամանակահատվածը:

Հարկային գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերությունը խախտելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 46 հոդվածի 1-ին կետի պահանջները՝ 2008թ. և 2009թ. արդյունքներով շահութահարկի հաշվարկներ ՀՏ չի ներկայացրել, իսկ 2009թ-ի օգոստոս- դեկտեմբեր ամիսների ընթացքում ՀՏ ներկայացրած ԱԱՀ-ի հաշվարկներում ցույց տրված՝ մանրա-մեծածախ առևտրային գործունեությունից ստացված հասույթը (առանց ԱԱՀ-ի) կազմել է 10.781.400 դրամ (12938200-2156800):

Ընկերության տնօրեն՝ Բենյամին Շանոյանը ստուգմանը չի տրամադրել սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ հայտարարելով, որ դրանք բազմաթիվ քննչական գործողությունների արդյունքում առգրավվել են քննիչների կողմից և չի կարող հայտնել, թե կոնկրետ ում մոտ և որտեղ են գտնվում դրանք: Ուստի հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ՝ Ռ.Գալոյանի 26.06.2012թ. <Հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից հաշվարկելու վերաբերյալ> թիվ 209-3 որոշումը և առաջնորդվելով ՀՀ Կառավարության 18.09.98թ-ի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ի հարկային պարտավորությունները հաշվարկվում են հիմք ընդունելով Ս.Առաքելյանի 29.11.2011թ. որոշումը, 07.06.2012թ-ի թիվ 1521 գրությունը և տրամադրված թիվ 16108111 քրեական գործում առկա նյութերը:

Քննիչի կողմից կատարված նախաքննությամբ պարզվել է, որ ք.Երևան, Վանոյան 61ա հասցեում գործող հացի արտադրամասը գործել է մինչև 2010թ-ի մարտ ամիսը և օրական արտադրվել ու իրացվել է շուրջ 900 հատ հաց, հետևյալ տեսականիով՝ <հրազդան> տեսակի 200 հատ, քաշը՝ 450 գրամ, <հրազդան> տեսակի 100 հատ, քաշը՝ 700 գրամ, <մատնաքաշ> տեսակի 200 հատ, քաշը՝ 450 գրամ, <մատնաքաշ> տեսակի 100 հատ, քաշը 700 գրամ և <բուխանկա> տեսակի 300 հատ, քաշը՝ 500 գրամ:

Հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելիս հացի մեկ կիլոգրամի վաճառքի միջին գինն ընդունվել է 300 դրամ (ըստ ՀՀ <Ազգային վիճակագրական ծառայության> www.armstat.am պաշտոնական կայքում զետեղված տվյալների): Նշվածի արդյունքում 450 գրամանոց հացի գինը կկազմի 135 դրամ, 500 գրամանոց հացի գինը՝ 150 դրամ, իսկ 700 գրամանոց հացի գինը՝ 210 դրամ:

Այսպիսով <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ի կողմից արտադրված հացի իրացումից ստացված հասույթը (առանց ԱԱՀ-ի) 2009թ-ի արդյունքներով ընդամենը կկազմի 42885785 դրամ, իսկ 2010թ-ի հունվար փետրվար ամիսների արդյունքներով՝ 6932220 դրամ:

Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների և քննիչ Ս.Առաքելյանի կողմից կատարված նախաքննությամբ պարզվել է նաև, որ <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ի կողմից 2009թ-ի փետրվար-մարտ ամիսների ընթացքում (ցանկը կցվում է) թվով 5 հաշիվ ապրանքագրերով <Էլիտ Շանթ> ՍՊԸ-ին է վաճառվել 50601304 դրամ ընդհանուր գումարով (42167753+ԱԱՀ՝ 8433551 դրամ)

խառը ապրանքներ, որի վերաբերյալ սահմանված կարգով <S չի ներկայացվել տեղեկություններ և համապատասխան հաշվարկներ:

<Մավա Իմպուլս> ՍՊԸ-ի տնօրեն՝ Բ.Շանոյանը հայտարարել է, որ չունի որևէ տեղեկություն կատարված վերոնշյալ գործարքների վերաբերյալ, սակայն հիմք ընդունելով քննիչի որոշումը և այն փաստը, որ կատարվել է ապրանքանյութական արժեքների օտարում, ուստի այդ գործարքից կառաջանա լրացուցիչ հարկային պարտավորություն:

Արդյունքում <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ի 2009թ-ի համախառն եկամուտը կազմում է 95834938 դրամ (42885785+42167753+10781400), իսկ հարկվող շահույթը՝ << <Հարկերի մասին> օրենքի 22 հոդվածով սահմանված 25 տոկոս վերադրի (հետհաշվարկի) կիրառումով կկազմի 19166988 դրամ ((95834938 : 1.25 = 76667950) (95834938 - 76667950)):

<Հիմք ընդունելով <Շահութահարկի մասին> << օրենքի 33-րդ հոդվածի, <Հարկերի մասին> << օրենքի 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների դրույթները շահութահարկի գծով ենթակա է գանձման ընդամենը 10.148.925 դրամ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Ինչպես նշվել է սույն ակտի շահութահարկի բաժնում՝ արտադրված հացի իրացումից ստացված հասույթը 2009թ-ի արդյունքներով կազմում է 51465000 դրամ, իսկ 2010թ-ի հունվար և փետրվար ամիսների արդյունքով՝ 8319000 դրամ, որից բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը <ԱԱՀ-ի մասին> << օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 16.67% դրույքաչափի հաշվարկով կկազմի 9.965.995 դրամ, այդ թվում՝ 2009թ-ի արդյունքով 8.579.215 դրամ և 2010թ. հունվար և փետրվար ամիսների արդյունքով 1.386.780 դրամ: Բացի այդ, 2009թ-ի փետրվար և մարտ ամիսների ընթացքում դուրս գրված թվով 5 հաշիվ-ապրանքագրերի միջոցով <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ի կողմից <Էլիտ Շանթ> ՍՊԸ-ին է վաճառվել 50.601.304 դրամի խառը ապրանքներ (մարգարին, այլուր, քացախ, սոդա և այլն), այդ թվում ԱԱՀ՝ 8.433.551 դրամ:

<Հարկային գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ԱԱՀ-ի գծով հարկային տեսչություն հաշվարկներ է ներկայացվել 2009թ-ի օգոստոս-դեկտեմբեր ամիսների և 2010թ-ի 1-ին եռամսյակի համար, որոնցում մանրածախ առևտրային գործունեությունից ստացված հասույթ է ցույց տրվել 14380600 դրամ, այդ թվում ԱԱՀ՝ 2397200 դրամ:

Եթե նախաքննությամբ կպարզվի, որ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում ներգրավված է եղել նաև հացի իրացման ծավալները, ապա վերոգրյալ 2397200 դրամ ցույց տրված հարկի գումարը ենթակա կլինի նվազեցման սույն ակտով հաշվարկված վճարման ենթակա գումարներից:

Այսպիսով <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ին առաջադրվող բյուջե լրացուցիչ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը կկազմի 2009թ-ի արդյունքներով 17012766 դրամ (8579215+8433551) և 2010թ-ի հունվար, փետրվար ամիսների արդյունքներով՝ 1386780 դրամ:

<Հիմք ընդունելով <ԱԱՀ-ի մասին> << օրենքի 20-րդ, 43-րդ, 43.1-րդ հոդվածների, <Հարկերի մասին> << օրենքի 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների դրույթները լրացուցիչ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմում է ընդամենը 20.916.040 դրամ:

<Մավա Իմպուլս> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ընկերությունը գտնում է, որ ստուգումն իրականացնող անձինք սխալ են մեկնաբանել <Հարկերի մասին> << օրենքի 22-րդ հոդվածի դրույթները:

Վկայակոչված օրենքի նորմից պարզ երևում է, որ դրանով սահմանված հաշվարկման կարգի կիրառման համար անհրաժեշտ նախապայման է ոչ միայն հարկ վճարողի կողմից հաշվապահական հաշվառման սահմանված փաստաթղթեր չներկայացնելը, այլ նաև՝ չներկայացնելու արդյունքում օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունները հաշվարկելն անհնարին դառնալը: Մինչդեռ տվյալ դեպքում բացակայում է <Հարկերի մասին> << օրենքի 22-րդ հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացող երկրորդ նախապայմանը:

<Հիմք ընդունելով ընկերության տնօրենի հայտարարությունը՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի բացակայության վերաբերյալ, ՊԵԿ-ի աշխատակիցները կարող էին քայլեր ձեռնարկել հաշվապահական հաշվառման անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու ուղղությամբ, մասնավորապես, դիմելու ստուգման նախաձեռնողին՝ << ոստիկանության ՔԳՎ Մալաթիայի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Առաքելյանին: Վերջինս իրավասու էր պարզելու, թե ներկա պահին քննչական ո՞ր մարմնի մոտ են գտնվում Ընկերությունից առգրավված հաշվապահական փաստաթղթերը:

Քանի դեռ վերը նշված քայլերը չեն կատարվել և նախաքննական մարմնի կողմից չեն ներկայացվել Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերը կամ հիմնավոր կերպով չի հաստատվել դրանք ներկայացնելու անհնարինությունը, <Հարկերի մասին> << օրենքի 22-րդ հոդվածի և << Կառավարության 18.09.98թ. թիվ 580 որոշման կիրառումն ապօրինի է:

Ստուգման ակտում հիմք է ընդունվել << ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ.Գալոյանի 26.06.2012թ. թիվ 209-3 որոշումը: Նշված որոշումը համարվում է վարչական ակտ: Ստուգումն իրականացնող անձիք << ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 26.06.2012թ. որոշման մասին չեն իրազեկել

«Մավա Իմպուլս» ՍՊԸ-ին, ինչից ելնելով՝ այդ որոշումը չի ստացել իրավաբանական ուժ և, ըստ էության, ստուգման ակտի հիմքում դրվել է իրավական ուժ չունեցող վարչական ակտ: Հետևապես տվյալ դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթները:

Ստուգման ակտում հարկեր հաշվարկելու համար հիմք է ընդունվել Ս.Առաքելյանի 29.11.2011թ. որոշումը, 07.06.2012թ. թիվ 1521 գրությունը և տրամադրված թիվ 16108111 քրեական գործում առկա նյութերը, սակայն ստուգման իրականացնող անձինք դրանք չեն ներկայացրել ընկերությանը: Նման պայմաններում, քանի դեռ հնարավորություն չի տրվել ծանոթանալու հարկերի հաշվարկման համար հիմք հանդիսացող տեղեկություններին և դրանց վերաբերյալ բացատրություններ ներկայացնել, ստուգումն իրականացնող անձինք չէին կարող վերագրյալ փաստաթղթերը հիմք ընդունել հարկերը հաշվարկելու համար:

Ստուգման ակտում հացի արտադրության բերված քանակի համար հիմք է վերցվել ոչ թե իրական արտադրության փաստը, այլ քննիչի որոշումը /ցուցումը/: Քննիչը միայն բացատրությունների հիման վրա է պնդում հացի արտադրության փաստը, առանց հաշվի առնելու, որ հնարավոր չէ հաց արտադրել առանց հացի համար անհրաժեշտ միջոցների և պայմանների գոյության:

Վերը շարադրվածից ելնելով ակնհայտ է, որ ձեռքի տակ չունենալով հաշվապահական փաստաթղթերը և չցանկանալով պարզել, թե ուր են դրանք և ինչու այդ պահին առկա չեն Ընկերությունում, ստուգողները հարկերի հաշվառման համար անվերապահորեն հիմք են ընդունել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի տրամաբանությանը չհամապատասխանող տվյալները:

«Մավա Իմպուլս» ՍՊԸ-ի կողմից 2009թ-ի փետրվար-մարտ ամիսների ընթացքում թվով 5 հաշիվ ապրանքագրերով «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ին վաճառված խառը ապրանքների վերաբերյալ գանգատում նշվել է հետևյալը:

Բենյամին Շանոյանը նշված գործարքների մասին տեղեկացել է ստուգման ակտից, որի պայմաններում չէր կարող միջոցներ ձեռք առնել տեղի ունեցող ապօրինությունները կանխելու համար: Բացի այդ, Բենյամին Շանոյանը 20.02.2008թ. Ընկերության տնօրեն դառնալուց հետո չի կարողացել ստանալ Ընկերության վերաբերյալ փաստաթղթերը, չի կատարվել գույքի հանձնում-ընդունում, նա չի ճանաչել ՍՊԸ աշխատողներին, բացի այդ դատարանի կողմից ձեռնարկվել է հայցի ապահովման միջոցներ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, եթե անգամ պայմանականորեն ընդունենք, որ Ակտում շարադրված փաստերը ճիշտ են, ապա դրանք չեն կարող հետևանքներ առաջացնել Ընկերության համար, քանի որ այդ գործողությունները չեն կատարվել ի դեմս տնօրենի, ով իրավասու էր գործունեություն ծավալել և գործարքներ կնքել:

Ըստ գանգատի, օտարում կարող է կատարել միայն օտարվող գույքի (իրավունքի) իրավատերը կամ նրա կողմից լիազորագրով կամ օրենքով հանդես գալու իրավունք ունեցող անձը: Տվյալ դեպքում խոսք է գնում Ընկերության՝ 50601304 դրամ ընդհանուր գումարով ապրանքների օտարման մասին: Հետևապես, օտարում կճանաչվեր միայն այն գործողությունը, երբ նշված ապրանքի նկատմամբ գործարք կատարած լիներ կամ Ընկերության տնօրենը, կամ նրա կողմից համապատասխան լիազորագրի հիման վրա նման լիազորությամբ օժտված որևէ այլ անձ: Որևէ այլ պարագաներում նշված ապրանքի փոխանցումը մեկ այլ սուբյեկտի հավասարագոր է հափշտակության (որից հարկային պարտավորություններ չեն առաջանում):

Ակտում նշված հաշիվ-ապրանքագրերը տնօրենի կողմից չեն ստորագրվել, ավելին, բացակայում է նաև առուվաճառքի կամ մատակարարման պայմանագիրը, որի հիման վրա այդ ապրանքները «օտարվել են»: Հետևապես, Ընկերության այն ապրանքների փոխանցումը «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ին, որի մասին խոսք է գնում Ակտում, չի կարող համարվել «օտարում» հարկային օրենսդրության իմաստով և նման գործողությունը չի կարող առաջացնել հարկային պարտավորություններ:

Ինչպես երևում է ստուգողների կողմից հիմք ընդունված հաշիվ-ապրանքագրերից, դրանց վրա բացակայում է ինչպես Ընկերության տնօրենի ստորագրությունը, այնպես էլ՝ Ընկերության կնիքը: Փոխարենը, այդ հաշիվ-ապրանքագրերը ստորագրված են Ընկերության հաշվապահի և պահեստապետի կողմից և դրանց վրա դրված է Ընկերության հաշվապահության կնիքը: Մինչդեռ, Բենյամին Շանոյանի՝ Ընկերության տնօրեն դառնալու պահից ի վեր, այդ կնիքը ապօրինաբար վերցվել և պահվել է հաշվապահի, նախկին տնօրեն Ա.Շահբազյանի կողմից:

Բենյամին Շանոյանին տնօրեն նշանակելուց հետո գլխավոր հաշվապահ Գայանե Հարությունյանը հրաժարվել է ենթարկվել նրա որևէ կարգադրության ու հրամանի և իր ապօրինի տիրապետման տակ է պահել հաշվապահության կնիքը, որով վավերացրել է մի շարք փաստաթղթեր (նույնիսկ Ընկերության գործունեությունը դադարեցվելուց հետո), որոնց մասին տնօրենը տեղյակ չի եղել:

Հետևապես, ոչ Ընկերությունը և ոչ էլ Բենյամին Շանոյանը չեն կարող պատասխանատվություն կրել նշված կնիքի՝ Գայանե Հարությունյանի ապօրինի տիրապետման տակ գտնվելու ընթացքում օգտագործելու համար, իսկ այդ կնիքով և Գ.Հարությունյանի ստորագրությամբ վավերացված փաստաթղթերը չեն կարող համարվել Ընկերության կողմից վավերացված:

Ելնելով վերագրյալից ընկերությունը խնդրում է ակտը համարել չեղյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ՌԲԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիայի քննչական բաժնի պետի ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ պետին հասցեագրված 07.06.2012թ-ի թիվ 1521 գրության (այսուհետ նաև Գրություն) համաձայն, Մալաթիայի քննչական բաժնում քննվող թիվ 16108111 քրեական գործով պարզվել և հիմնավորվել է, որ «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ն 2008թ. նոյեմբերից մինչև 2010թ. մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում, չարամտորեն խուսափել է հարկեր վճարելուց, խեղաթյուրել է հարկային հաշվետվությունները՝ որոշ դեպքերում ցույց է տվել զրոյական հաշվետվություն, իբր չի աշխատել, սակայն այդ ընթացքում իրականացրել է հացի արտադրություն:

Գրության համաձայն, կատարված նախաքննությամբ պարզվել է, որ ընկերությանը պատկանող ք.Երևան, Վանոյան 61ա հասցեում գործող հացի արտադրամասը գործել է մինչև 2010թ. մարտ ամիսը և օրական արտադրվել և իրացվել է ընդհանուր 900 հատ հաց և մասնագիտական ակտի համաձայն՝ հացի արտադրությունից և իրացումից ԱԱՀ կազմում է 12.3 մլն դրամ, շահութահարկը՝ 3.8 մլն դրամ, ինչը թաքցվել է և պետական քույզ չի վճարվել: Ըստ Գրության, պարզվել է նաև, որ «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ն 2009թ-ի փետրվար-մարտ ամիսների ընթացքում թվով 5 հաշիվ ապրանքագրերով «Էլիտ-Շանթ» ՍՊԸ-ին վաճառել է ընդհանուր գումարով 50.601.500 ՀՀ դրամի ապրանքներ:

Վերոգրյալից հետևում է, որ թե ընկերության կողմից իրեն պատկանող ք.Երևան, Վանոյան 61ա հասցեում գործող հացի արտադրամասում մինչև 2010թ. մարտ ամիսը օրական 900 հատ հաց արտադրվելու և իրացվելու, թե 2009թ-ի փետրվար-մարտ ամիսների ընթացքում թվով 5 հաշիվ ապրանքագրերով «Էլիտ-Շանթ» ՍՊԸ-ին ընդհանուր գումարով 50.601.500 դրամի ապրանքներ վաճառելու փաստերը պարզվել և հիմնավորվել են Մալաթիայի քննչական բաժնում քննվող քրեական գործով իրականացված նախնական քննության ընթացքում, և դրանք, ըստ էության, չէին կարող հիմք չընդունվել ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց կողմից:

Ինչ վերաբերվում է բողոքում նշված այն պնդմանը, որ ընկերությանը չի տրամադրվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 26.06.2012թ. որոշումը, ապա այն չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 26.06.2012թ. որոշումը նույն օրը ստորագրությամբ ստացել է ընկերության տնօրենի կողմից լիազորված անձ՝ Ս.Նալբանդյանը:

Բողոքում բերված այն պնդումների վերաբերյալ, որ ստուգող մարմնի կողմից քայլեր չեն ձեռնարկվել հաշվապահական հաշվառման անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու ուղղությամբ, մասնավորապես, չեն դիմել ստուգման նախաձեռնողին՝ ՀՀ ոստիկանության ԲԳՎ Մալաթիայի քննչական բաժնի անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու համար, նշվեց հետևյալը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչությունը 07.02.2012թ-ին ՀՀ ՌԲԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիայի քննչական բաժնի հասցեագրված թիվ 3253/14 գրությամբ խնդրել է տրամադրել «Մավա Իմպուլս» ՍՊԸ 01.03.2008թ-ից մինչև 01.03.2010թ. ընկած ժամանակահատվածին վերաբերող սկզբնական հաշվապահական փաստաթղթերը՝ ընկերությունում վերստուգում կատարելու համար: ՀՀ ՌԲԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիայի քննչական բաժնի 21.02.2012թ. թիվ 7/9-451 պատասխան գրությամբ հայտնվել է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում համապատասխան մասնագետը կարող է տեղում ուսումնասիրել թիվ 69100109 քրեական գործով առգրավված ընկերության 2008թ. հաշվապահական փաստաթղթերը: Ընկերության 2009թ. և 2010թ. հաշվապահական փաստաթղթերի վերաբերյալ որևէ տեղեկություն չի հայտնվել:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգող մարմինը ձեռնարկել է համապատասխան միջոցներ ընկերության հաշվապահական հաշվառման անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու ուղղությամբ, սակայն դրանք ցանկալի արդյունք չեն տվել:

Հանձնաժողովը գտնում է, որ նման պայմաններում երբ առկա չեն եղել վերստուգվող ժամանակաշրջանին վերաբերող հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, որի հետևանքով ըստ էության անհնար է դարձել հաշվարկել ընկերության հարկային պարտավորությունները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթի կիրառումը բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից:

«Մավա Իմպուլս» ՍՊԸ-ի կողմից 2009թ-ի փետրվար-մարտ ամիսների ընթացքում թվով 5 հաշիվ ապրանքագրերով «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ին վաճառված ապրանքների վերաբերյալ նշվեց հետևյալը:

Ինչպես որ վերը նշվել է, ՀՀ ՌԲԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիայի քննչական բաժնի պետի ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ պետին հասցեագրված 07.06.2012թ-ի թիվ 1521 գրության համաձայն, կատարված նախաքննությամբ պարզվել է նաև, որ «Մավա Իմպուլս» ՍՊԸ-ն 2009թ-ի փետրվար-մարտ ամիսների ընթացքում թվով 5 հաշիվ ապրանքագրերով «Էլիտ-Շանթ» ՍՊԸ-ին վաճառել է ընդհանուր գումարով 50.601.500 ՀՀ դրամի ապրանքներ:

Բացի այդ, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանին հասցեագրված <էլիտ Շանթ> ՍՊԸ 11.05.2011թ-ին գրության համաձայն, <էլիտ Շանթ> ՍՊԸ-ն <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ից 01.01.2009թ-ից մինչև 31.03.2009թ. ընկած ժամանակահատվածում թվով 5 հաշիվ ապրանքագրերով ձեռք է բերել ընդամենը 50.601.304 դրամի ապրանքներ: Նշված գրությունը ստորագրված է <էլիտ Շանթ> ՍՊԸ տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից և կնքված է <էլիտ Շանթ> ՍՊԸ կնիքով: Հարկ է նշել նաև, գործում առկա են <Մավա Իմպուլս> ՍՊԸ դրամարկղային մուտքի օրդերի համապատասխան անդորրագրերը, որոնցով վերոգրյալ թվով 5 հաշիվ ապրանքագրերով իրացված ապրանքների (ընդամենը 50.601.304 դրամի) դիմաց վճարված գումարները մուտքագրվել են ընկերության դրամակալ:

Վերոգրյալ հանգամանքներն ապացուցում են <Մավա Իմպուլս> ՍՊԸ-ի կողմից թվով 5 հաշիվ ապրանքագրերով <էլիտ Շանթ> ՍՊԸ-ին ընդամենը 50.601.304 դրամի ապրանքներ իրացնելու և դրա դիմաց համապատասխան գումարները գանձելու փաստը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ